



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

03 06 2016 թ., արձ. թիվ 10

Կապերյան Եմ Եմ

Ռեկտոր

Ա. Թարվերդյան

03.06. 2016 թ.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ
ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ
ԸՆԹԱՅԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2016

Նշանակություն և կիրառման ոլորտ

Սույն ընթացակարգը նախատեսված է համալսարանի միջազգայնացման ոլորտի գործունեությունից համալսարանի հետ առընչվող միջազգային համալսարանների և կառույցների պահանջների բացահայտմանը:

Միջազգային կառույցների պահանջների բացահայտման նպատակն է՝ համալսարանն առավել շարժունակ դարձնել միջազգային համագործակցության տեսակետից, օժանդակել համալսարանի գործառույցների միջազգային մակարդակով իրագործմանը:

1. Փաստաթղթային հենք

- ՀԱԱՀ ռազմավարական ծրագիր
- Արտաքին կապերի դեպարտամենտի կանոնադրություն
- Արտաքին կապերի և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, ընթացակարգեր
- Համալսարանի գործունեության պլանավորման, կառավարման և մշտադիտարկման քաղաքականություն:

2. Ընթացակարգ

Միջազգային համալսարանների և կառույցների պահանջների բացահայտման մեխանիզմներն են.

ա) Միջազգային համալսարանների և կառույցների տեղեկատվական բազայի ուսումնասիրում.

- վերոհիշյալ համալսարանների և կառույցների հետաքրքրությունների շրջանակի բացահայտում,
- համագործակցությանը ներկայացվող պահանջների բացահայտում,

բ) Միջազգային համալսարանների և կառույցների ներկայացուցիչների հետ հանդիպումներ, կլոր սեղաններ, բանավոր հարցախույզ:

գ) Արտերկրի ուսանողների հետ հանդիպումներ:

3. Բացահայտված պահանջների կիրառման ձև

Միջազգային կառույցների և համալսարանների կողմից ներկայացվող պահանջների քննարկումն իրականացվում է համալսարանի Արտաքին դեպարտամենտում՝ շահագրգիռ կողմերի ներկայությամբ, ինչպես նաև համալսարանի այլ ստորաբաժանումներում և կառույցներում ևս, որոնք անմիջական մասնակցություն կունենան քննարկվող հարցերի շրջանակի հետ: